ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1587-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2017.12.15/76(1351) Հոդ.1254	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	23.11.2017
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	13.12.2017
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.01.2018	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՄ ՆԵՐՄՈՒԾՈՂ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՕՏԱՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏՆ ԻՐԵՆՑ ՄՈՏ ԱՌԿԱ՝ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՎԱԾ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2017 թվականի N 1587-Ն

ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՄ ՆԵՐՄՈՒԾՈՂ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՕՏԱՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏՆ ԻՐԵՆՑ ՄՈՏ ԱՌԿԱ՝ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՎԱԾ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 391-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև օրենքով սահմանված՝ դրոշմավորման ենթակա ապրանքներն իրենց կողմից առանց դրոշմավորման օտարելու վերջնաժամկետն իրենց մոտ առկա՝ դրոշմավորման ենթակա ապրանքների գույքագրված մնացորդների դրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Սույն որոշումը տարածվում է նաև սույն որոշման պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 2018 թվականի հունվարի 1-ը սույն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան արտադրող կամ ներմուծող չհանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքների մնացորդների դրոշմավորման վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Կ. Կարապետյան

2017 թ. դեկտեմբերի 13
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
նոյեմբերի 23-ի N 1587-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՄ ՆԵՐՄՈՒԾՈՂ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՕՏԱՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏՆ ԻՐԵՆՑ ՄՈՏ ԱՌԿԱ՝ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՎԱԾ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են արտադրող կամ ներմուծող չհանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ դրոշմավորման պարտավորություն կրող) մոտ առկա՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 390-րդ հոդվածի 1-ին մասի ցանկով սահմանված՝ 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո դրոշմավորման ենթակա նոր ապրանքների մնացորդների դրոշմավորման հետ կապված հարաբերությունները:

2. Դրոշմավորման պարտավորություն կրողները չդրոշմավորված ապրանքների մնացորդների դրոշմավորման նպատակով մինչև այդ ապրանքներն իրենց կողմից առանց դրոշմավորման օտարելու համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրք) սահմանված վերջնաժամկետը գույքագրում են իրենց մոտ առկա չդրոշմավորված ապրանքները և դրանց վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում են հարկային մարմին՝ համաձայն ձևի:

3. Հարկային մարմինը գույքագրված ապրանքների քանակի (մնացորդի) վերաբերյալ ստացված տեղեկությունների ճշտման նպատակով օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել հսկողական միջոցառումներ:

4. Դրոշմապիտակները տրամադրվում են անվճար՝ հարկային մարմին ներկայացված՝ չդրոշմավորված ապրանքների քանակին (մնացորդին) համապատասխան: Հարկային մարմնի իրականացրած հսկողական միջոցառումների արդյունքում չդրոշմավորված ապրանքների այլ քանակ (մնացորդ) արձանագրվելու դեպքում դրոշմապիտակները տրամադրվում են արձանագրված քանակին (մնացորդին) համապատասխան:

5. Դրոշմավորման պարտավորություն կրողները հարկային մարմին ներկայացրած՝ չդրոշմավորված ապրանքների քանակին (մնացորդին) համապատասխան դրոշմապիտակները ձեռք են բերում իրենց հաշվառման վայրի հարկային մարմնից՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված «տեղական» մակագրությամբ դրոշմապիտակների ձեռքբերման հայտի հիման վրա: Հայտը ներկայացվում է մինչև դրոշմավորման ենթակա ապրանքներն առանց դրոշմավորման օտարելու համար օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մինչև նշված ժամկետը կարող են կատարվել ճշգրտումներ՝ նոր հայտ ներկայացնելու եղանակով:

6. Դրոշմավորման պարտավորություն կրողները մինչև դրոշմավորման ենթակա ապրանքների օտարումն այդ ապրանքների տեսակի, ենթատեսակի (նկարագրի), տարողության (ծավալի, քաշի կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորի), քանակության և համապատասխան դրոշմապիտակների սերիաների ու հերթական համարների (այդ թվում՝ միջակայքերով) վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև այդ տեղեկություններում ճշգրտումները հարկային մարմին ներկայացնում են օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

7. Դրոշմավորման պարտավորություն կրողները չդրոշմավորված ապրանքների մնացորդների դրոշմավորումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 773-Ն որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Վ. Ստեփանյան

Ձև

Տեղեկություններ արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից գույքագրված ապրանքների մնացորդների վերաբերյալ	Փաստաթղթի հերթական համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)
1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
2. Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	
3. Գտնվելու վայրը (անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը)	
4. Հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը	

5. Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ	6. Ապրան-քախմբի համառոտ անվանումը	7. Ապրանքատեսակի անվանումը	8. Ենթատեսակը (նկարագիրը)	9. Տարողությունը (ծավալը. քաշը կամ տվյալ ապրանքա-տեսակին բնորոշ չափման այլ միավոր)	10. Դրոշմավորման համար անհրաժեշտ դրոշմա-պիտակների քանակը
				Ընդամենը	

Հարկ վճարողի/ղեկավարի _____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

___ _____ 20 թ.